

**Հայ մնալու համառումը մեր այն կողմերում
(Մկրտիչ Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերեն» ժողովածուները)**

Փիլոյան Վալերի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.2hs-87>

Հանգուցային բառեր. եղենից հետո վերապրողներ, հավատ, սովորություններ, հուշի ու սիրտ խմորում, ժառանգորդություն, ավարտ, Հայոց պատմության ընտանեկան տարբերակ, երգիծանք

Ներածություն: Արաքսից անդին՝ մինչև Եփրատ ու Տիգրիս, սրանցից անդին՝ մինչև Կիլիկիա ու Զմյուռնիա և անդին, մարդիկ կան՝ սակավ կամ բազում, որ իրենց դեռ հայ են համարում: Հարյուր կամ ավելի տարիներ առաջ տեղի ունեցածը մինչև վերջ չիմաստավորելով՝ պիտի փաստենք իրողությունը և ասենք, որ «գաւառներուն մէջ Հայեր կ'ապրէին, կը յամառէին ապրիլ եւ ապրիլ իբրեւ Հայ, եւ Սփյուռքը բացարձակապէս կ'անգիտանար անոնց գոյութիւնը» (Անահիտ Կարմիրյան) [3]: «Կ'անգիտանար» ոչ միայն սփյուռքը, և միայն հավատավոր խենթեր էին զգում տեր լինելու պատասխանատվությունը:

Արամ Հայկազի «Չորս տարի Քուրդիստանի լեռներու մէջ» երկը ակնարկում էր Թուրքիայի գավառներում ապրող հայերի գոյությունը, Մկրտիչ Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերեն» գրքերը հաստատում են այս իրողությունը, և նրա պատմությունները, որ Դիարբեքիր-Տիգրանակերտի հայերի մասին են, հիշում են նաև այլ բնակավայրերում ապրող հայերի. «Տէր Արսէն, հայերու միակ քահանան, երկու օր վերջ պիտի մեկնի Խարբերդ, հոնկէ պիտի անցնի Մալաթիա, հոն հաւաքական մկրտութիւններ, հարսնիք պիտի ընէ, պատարագ պիտի մատուցանէ, քանի մը օր, թերեւս ալ քանի մը շաբաթ՝ հոն պիտի մնայ, այդ տեղի հայերը պիտի միխթարէ: Է՛հ, եթէ այդտեղի հայերը քահանայ մը իսկ չունին, հայ չէ՞ն, անոնք խունկի հոտը, խաչին համը չէ՞ն գիտեր...» [2, 55]:

Մ. Մարկոսյանը հիշողության մեջ ամբարված ամեն ինչը պատմելու խնդրառություն ունի: Թվում է՝ միազիծ պատմություններ են, սակայն արդյունքում ձևավորվում են այնպիսի պատմվածքներ, որոնք ներառում են թեմային վերաբերող, զուգահեռ կամ հավելվող պատմություններ, մանրամասեր ու մանրադետալներ, և ամբողջանում է Խանչլեթք (Գյավուր թաղ) թաղամասն իր մարդկանցով ու դեպքորդիպվածով, ազգագրությամբ ու սովորությոներով, նաև թուրք, հրեա, քուրդ, ասորի հարևաններով:

Մկրտիչ Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» ժողովածու: Մկրտիչ Մարկոսյանը գիտի ընթերցողին թակարդելու, իրենով անելու գաղտնիքը: Ահա «Մեր այդ կողմերը» գրքի առաջին իսկ՝ «Եկեղեցին» պատմվածքը, որ սկսվում է կիրակի օրվա պատկերմամբ: Կիրակի, ասել է՝ պատարագ, ասել է՝ եկեղեցի, ուրեմն անցնենք եկեղեցի տանող ճանապարհով, տեղ հասնենք, մտնենք եկեղեցու ընդարձակ պարտեզը, որ «գրաւումա՛ծ է դարձեալ աղքատ հայ ընտանիքներու կողմէ: Հոն տուն-տեղ եղած են Պայտար Հէնուշը, Զուլիսկ Սարգիսի երկու յիմար աղջիկները, Երկաթագործ Տիգրանի ութսունամեայ պառու մայրը՝ Ռէհան, Խել Ուսոն եւ ընտանիք մը որ դեռ վերջերս եկեր է Տալվորիկէն: Սա քանի մը հոգիի վրայ, երեք խենթերու համեմատութիւնը, պարզ դիպուածի արդիւնք չէ բնաւ» [1, 15]: Ու քանի որ խոսքը հասել է խենթերին, մասնակի անդրադարձ կա նրանց. «Այստեղ կան վաւերական խենթեր, կան կէս խենթեր, կան խենթուկներ, կան նաեւ խենթ ձեւացողներ, որոնք կը կազմէն այս քաղաքին պելլաներու՝ փորձանքի դասակարգը» [1, 16]:

Եկեղեցին պատերազմի տարիներին զորանոց է եղել, «եւ դեռ նոր պաշտամունք կը կատարուի հոն. պատերը դեռ չեն յազգեցած խունկի հոտէն» [1, 16]: Համեստ է եկեղեցու կահավորանքը. «Եկեղեցիին պատերէն վար կախուած են քանի մը սուրբի դէմքեր, որոնց

երեսէն ժամանակը լիզեր է իւղաներկը» [1, 16]: Պատարագի ենք եկել, ուրեմն լսենք քահանայի քարոզը. «Ըսօր Սուրբ Լուսէւորչի տօն է: Գրիգոր Լուսէւորչիչ միր ըմնունին մինծն է: Ըն Էտին Տրդէտ թեգնուր իկէ. ընի Գրիգոր Լուսէւորչին ըսեց կրօնքդ ինքար էրէ, չէ վըր չէ քըզի խոր վիրապ կը նետեն, եանէ, զընտան կը թեպիւմ... Գրիգորի Լուսէւորչի լէ հեւետքը ինքար չէրից, գնեց խոր վիրապ նստել և իննը տերի հօն մնեց աչ տուտուգ...<անոթի, ծարաւ>» [1, 17]:

Պատարագը թե վերջացավ, հանդիպումը չվերջացավ, և ընթերցվում է նվիրատվությունների ցուցակը, ի մասնավորի՝ «Գասպար Եմենիճեան մէկ օսկի ժէմուն, տասը օսկի տերտերին, մէկ օսկի լէ լուսերերին...

Եւ այսպէս կը կարդա երկար շարք մը...

Քահանային այս բարբառը ժողովուրդին համար պաշտօնական հայերէն աշխարհաբարն է: Իսկ երբ պատահի որ վարդապետ մը քանի մը տարին անգամ մը գայ, նախագահէ արարողութեան եւ խոսի մաքուր աշխարհաբարով, ժողովուրդը զայն երկիւղածութեամբ մտիկ կ'ընէ իբրեւ գրաբար, որմէ բան մը չի հասկնար թէւէ, բայց չէ՝ որ Աստուծոյ խոսքը գրաբարով իջաւ իրկինքէն...

Նախանձելի հաւատք, երանելի ժողովուրդ» [1, 17-18]:

Այսպէս մտնում ենք մի գրաշխարհ, որից անմիջապէս ելքը հակացուցված է, պիտի հասնենք գրքի վերջին հանգրվանին, ասել է ճանապարհ ենք անցնելու: Նախ հասնելու ենք Տիգրանակերտից մեկուկէս ժամ հեռու գտնվող Սաթի գյուղ: «Գիւղին ամբողջ հարստութիւնը՝ փոքր աղբյուրի մը գլուխը, թզենիի մը հողէն դուրս ելած երկու խաչաձէւ արմատներն են» [1, 19]: Այստեղ հասնում են ոչ միայն ծեր ուխտավորները, այլև երիտասարդները, քանի որ հարմար ժամադրավայր է, հանդիպավայր, ուրեմն և ասեկոսեի առիթ, կովատեղ, քանի որ «երիտասարդ Նաօ մը եւ երիտասարդ Աօ մը առանց գիտակցութիւնը ունենալու՝ սիրահարած կ'ըլլան Սաթիի մը», և քիչ անց «Ճշոցներու մէջ կ'ամ Աօն, եւ կ'ամ Նաօն կը վիրաւորուի: Այսպէս՝ սուրբի պատկերը անգամ մը եւս կը լուացուի արինով: <...> Սուրբը կը խմէ արիւնը մարդոց... կը խմէ արիւնը աքլորներուն... կը խմէ արիւնը ոչխարներուն եւ դէռ անյագ կը մնայ եւ կը սպասէ յաջորդ տարուն անթիւ զոհերուն» [1, 22]:

Հաջորդում է «Հարսանիքը», որ ծեսի նկարագրությունն է, այլ սիրահարների, ապագա հարսների ու առկա հարսների գնահատությունն է տարիքն առած կանանց կողմից՝ համով-հոտով, բարբառախառն պատմված: Ու արդեն տեսանելի է դառնում «Մեր այդ կողմերը» ժողովածուի մէջ ներառված պատմվածքների թեմատիկ հերթագայության հեղինակային նախասիրություն-սկզբունքը՝ ծնունդից մինչև մահ, մանկական նախնական տպավորություններից մինչև ավելի հասուն տարիների հիշողություններ: Նույն սկզբունքը կա նաև «Տիգրիսի ափերէն» ժողովածուի «Գաւառական» բաժնում:

Մարկոսյանի գործերին հարաբերվելիս այն տպավորությունն է ձևավորվում, թե գործ ունեն ոչ թե պատմվածքների, այլ պատկերների հետ, քանի որ արտաքին գործողության նկատելի պակաս կա, սակայն երբ շփումը շարունակվում է, և տեսանելի է դառնում հուշի ու սիրո սքանչելի խմորումը, այլևս հարցը գլխիկոր հեռանում է՝ զգալով իր ավելորդությունը:

Մարկոսյանը Մանուրու աշակերտն է և օրինական իրավահաջորդը: Եվ Մարկոսյանը թերևս Մանուրուց է սովորել պատմվածքն ավարտելու արվեստը, էրբ մեկ-երկու նախադասությունը հավաքում, ամբողջացնում և վերջակետում է պատումը՝ նրա համար ապահովելով նորավեպին բնորոշ հանգուցալուծում: Օրինակներ հիշենք Մանուրուց, «Առջինեկ» պատմվածքում դաշտում մեն-մենակ ծննդաբերած հարսը մի կերպ հայրական տուն է հասնում և ուշաթափվում. «Երբորդ օրը մայրս կիմանա, որ չեմ մեռել, ողջ եմ, աղջիկ չեմ, տղա եմ» [4, 360]: «Փշատիին ծաղիկը» պատմվածքում արդեն նշանված սիրահարների անմեղ հանդիպման վկան փշատի ծաղիկն է եղել, որ «մատնել է» հանդիպման փաստը, և «Փշա-

տիին ոսկեգույն ծաղիկը գետինը ինկած տեղը մնացեր էր» [4, 236]: «Մինաս քեռիին հինգ կնիկները» պատմվածքում Մինաս քեռու կանայք հերթով մահանում են, և նա հինգերորդ անգամ է ամուսնանում, սակայն «Այդ տարին դեղնություն մը եկավ Մինաս քեռիին վրա: Այս անգամ կարգը Մինասինն է ըսին: Անանկ ալ եղավ: Ինք մեռավ, Խնկո քեռկինը ապրեցավ» [4, 286]:

Եվ վերադառնանք Մ. Մարկոսյանի գործերին. «Ու սկսանք լալ» պատմվածքում տասնամյա հեղինակն իր հորաքրոջ մանկահասակ տղայի՝ Զավենի հետ գնում է թոշունի որսի, որ որսը բերի հիվանդ տատի համար: Որսում են երկու թոշուն՝ մի ճնճղուկ և մի թուրթի թոշուն, սակայն խախտել են հայրական պատվերը՝ արևը մայր չմտած տանը լինել: Այդ պատճառով էլ պատժվում են, և որսը բաժին է հասնում տան Մեստան կատվին. «Մեր արցունքներուն մէջ Մեստանը փորը կշտացուց: Այդ օրէն վերջ չսիրեցի մեր Մեստանը... Երկու օր վերջն ալ մեծ մայրս մեռաւ» [1, 47]: «Թումասին աղջիկը» պատմվածքն առաջին սիրահարության մասին է, իսկ առաջին սերն առաջին հացի պէս միշտ կուտ է գնում: Տարիներ անց «Կինս յոյ է, եթէ աղջիկ ծնի, անունը Շուշան դնէ մ...» [1, 67]: «Քը խ Սիլվա» պատմվածքն էլ է պատանեկան հրապուրանքի մասին. հրապուրանքը փոխադարձ է, և աղջիկը մի թաշկինակ է նվիրում՝ «չորս անկյունն ալ իմ անունիս գլխագիրը՝ «Մ» տառը կար. չորս կողմը մէյմեկ մէն... Հասկցայ... Հսել էր, թէ Սիլվան ինծի չորս անգամ անելի գարնուած էր» [1, 157]: Բայց թաշկինակը մարխաման, օգտագործվում է իր ամենատղղակի նշանակությամբ, այնինչ «պէտք էր չորս անգամ համբուրէ մ ու սրտիս վրան սեղմէ մ»: Եվ ավարտը. «Մեր սիրոյ խաղը, մեր գերկուելու խաղը արեան կարմիր գոյն ունէր, մոխրագոյն դարձաւ: Այդ մոխրներէն որպէս յիշատակ երկու բան միայն մնաց. մեր անունները

– Եալանչի Մկօ...

– Քըխ Սիլվա...» [1, 159]:

«Էրթէ չէրէ, իգէ բերին» պատմվածքում Քեժոն վեց աղջիկ ունի, և սպասում են յոթերորդին: Վեց աղջկա դեպքում այն օրերին (և հիմա) դիմում են աղոթքի գործությանը, հմայախոսության, գրբացության, կախարդանքի... «Օր մըն ալ Փրուշ Պաճօն, Թովալ Թիւմէն եւ Էդոս Պաճօն որոշեցին, թէ Խաչխաթունը այդ գարնան պէտք է անպայման «տղէ մի» ծնի: <...> Ելան գացին խենթ Աղանիին. սա պառաւ մըն էր, կատարյալ խենթ <...> խենթի մը աղօթքը երբեմն հազար խելացիի աղօթք կ'արժէր» [1, 118]: Եվ սկսվում է գործողությունը. Աղավնին եկավ, «նախ իր փորը կշտացուց Խաչխաթունի եփած մալէգով, յետոյ ալ պաստեղով», ապա պահանջեց հմայության համապատասխան պարագաներ՝ «Սուխ տուեցէ՛ք», «Դենէկ մի բերեցէ՛ք», «Բրդօ մի հեց տուեցէ՛ք» (հացն անպայման պիտի չոր լինի), «Բուռ մի էղ բերեցէ՛ք», «Թէ՛գ կրէկ վառեցէ՛ք»: Այս ամենից հետո երկար աղոթում է Աղավնին: «Ու աղօթքի ավարտին՝ Աղանին գնաց բուռին մէջի աղը կրակին վրայ նետեց: Աղը չգրտաց: Աղանին այս անգամ լսելի ձայնով խոսեցաւ:

– Էրթէ չէրէ, իգէ բերին... Էրթէ չէրէ, իգէ բերին...

<...> «Երթա չարը, գայ բարին» մաղթանքը երբ լմնացաւ, հացն ու սոխն ալ՝ Աղանիի գրպանը մտած էին արդեն:

Աղանին վերջին պահուն իր խենթութիւնը անգամ մըն ալ փաստեց ու դանակը տարաւ հորին մէջ նետեց: <...> Բայց «չէրէ չգնեց, բերին լէ չէկէ...»: Յաջորդ գարնան Խաչխաթունի եօթերորդ գաւակն ալ աղջիկ ծնաւ... Իսկ Քեժօն այս արարողութիւնէն երբեք լուր չունեցաւ:

Մեր Տիգրանակերտի երկինքին վրայ բազմած Մեծն Աստուած այս անգամ Քեժօյի ականջը ինչ ըսաւ կամ ինչ «գուրցից», չենք գիտեր, բայց Քեժօն «հերիք է», ալ կը բաւէ ըսաւ ու վերջին աղջկան անունը Աղանի դրաւ» [1, 121]:

«Կեալուր Մեհլէ» պատմվածքը, ինչպէս շատ ուրիշներ, իսկական գլուխգործոց է: Այստեղ իրար են նարոտվում դիպվածք, պատմողի վարպետությունը, նրբին հումորը,

ավարտի գերագույն ներդաշնությունն ու անհուն տխրությունը, մարդասիրությունը, իրողություններ, որ իրավ անբաժանելի են խոսքարվեստի գործերից:

«Խչէ Պաճօն» «Կիւզէկէնց Մարիամի» սկեսուրն է, սակայն «Մարիամը Խչէն առաջ մեռաւ» [1, 39]: Եկեղեցու ժամկոչ Ուսոն, երբ իմանում է բոթը, կոչնակ է զարկում, և «կոչնակին խուլ ձայնը սկսաւ տարածուիլ ամբողջ Տիգրանակերտի նեղ փողոցներով <...> կոչնակի դողանքը կ'երթար բոլոր հայերուն ականջը, կը կախուէր անոնց պաղէն կարմրած բլթակներէն ու կ'ըլլար հարցում» [1, 40]: Ապա «Ուսօն իր կարճուկիկ հասակովը ձիւներու մէջ կը գլորուէր, կ'երթար մինչեւ ***Կէափուր Մէշէ՛՛ երբեմնի թաղը հայերուն, ուր մնացած էին մի քանի ընտանիք եւ մեկ մըն ալ անունը՝ Կէափուր Մէշէ՛՛***» [1, 42]:

Երկու օր տնած սգո արարողությունից հետո «Մարիամի դիակը յանձնուեցաւ հողին» [1, 42]: Պատմվածքի ավարտը հյուսելիս հեղինակն ինչպես է կարողանում ամեն ինչ ներդաշնակել իրար՝ չնոռանալով ոչինչ. «Հաստ բազմութիւն կար եկեղեցոյ մէջ: Տիգրանակերտի բոլոր հայութիւնը ներկայ էր, բացի Տէխտեկէ՛ Պէկէն Վանէսին: Ան կ'իրակիէն զատ երբեք խանութը չէր գոցեր...»

Ու Մարիամը տարին թաղեցին իր վեցամսեայ աղջկան թարմ գերեզմանին քով, քիչ մըն ալ քուրտ անվարտի փոքրիկներուն հաց ու հրուշակ բաժնելով...

Մարիամը, Կիւզէկէնց նազելի Մարիամը, երբ հողին հետ մնաց առանձին, կոշկակար Թումաս սկսաւ կրկին տրեխ կարել, երկաթագործ Տիգրան՝ կղպանք շինել, կլայագործ Նշան՝ նարտ խաղալ իր դրացի կնքահայր Յակոբի հետ... Այդ գիշեր անքուն էին երկու հոգի: Մէկը վարպետ Սգոն էր, Մարիամին ամուսինը, միւսը՝ Խչէն...

Սգոն երբ գիշերը անկողին մտաւ, մէկ կողմը պզտիկ տղան Տիգրօն, միւս կողմը ուրբամայ աղջիկը Մէթօն կը քնանային: Իսկ ինք, մօրը հետ միասին, իր պառկած տեղէն, սենեակին աղոտ լոյսին մէջ կը դիտէր պատէն կախուած, դեղնած նկարը Մարիամի... Դուրսը, Տիգրանակերտի նեղ փողոցներուն մէջ, երբ Սուրբ Սարգիսը իր ճերմակ մօրուքը կը սանտրէր, Մարիամը իր տաք անկողինը, վարպետ Սգոյի տաք գիրկը կը փնտռէր...» [1, 43]:

Մկրտիչ Մարկոսյանի «Տիգրիսի ափերէն» ժողովածուն: Միանշանակ երգիծական բնույթ ունի «Օսկերիչ Մերթըր» պատմվածքը: Բայց ամեն ինչ իր հերթով. «Այդ առաւօտ երբ Գառնոյնէնց էջը ամեն ատենուան պէս զոաց, Լուսիե պաճօն հասկցաւ թէ առտուան ժամը վեցն էր: Լուսիե պաճօն փորձով գիտէր նաև, եւ երբ իշուն նոյն ժամուն զօալը վերջանար, անոր անմիջապէս պիտի հաջորդէր Գառնոյի ծերացած եւ տեղ-տեղ ալ կուրծքի փետուրները թափած դեղին կտուցով ալքորին աղոթքը՝ «Առաւօտ լուսոյն»» [2, 15]:

Ավանակի և աքաղաղի այս փոխասացությունից հետո Լուսիե պաճոն գործ ունի՝ Մշակ Սարգսի և Լուսիե պաճոյի չորրորդ և առաջին մանչ զավակի «ակոռահետիկը»-ատամ-նահատիկն է նշվելու, որին ներկա են լինելու բոլոր ազգականները, դուռ-դրացիները. «Էնսօ պաճօն, Թոփալ Թիւմէն, Կիւզէկէնց Մէլթօն, Նալպանտենց հարսը՝ Աղկիկ Խանըմը, Հեճի Մաման, Փռուշ պաճօն, Լաստիկցի Էդուշին պուլտեցի կինը, կամ շլաքուած երեսուկ պատելուն պատճառաւ, բուն անունովը՝ Երեսը պոյալի Ժանթօ Խանըմը, Ոօգանենց Ալմաստը, Տէր Արսէնի կինը՝ գիրուկ երեցիկն ու աղջիկները, պայտար Խեւ Հենուշին կինը՝ Կլոր Էննէն, Խլինքոտ Ռոզինը, Խեւ Մարօն, Աղաճանենց Վերժին քոյրիկը, դեղագործ Քելտանի Հիւր-Հիսին կինը՝ Էրշէլուս պաճօն, Սուրեանի Ֆէիիմէ Խանըմը, դրացիներէն Վերգօ պաճօն, օղորմած-հոգի Թումեսին կինը՝ Էստղիկ պաճօն, Իսփիրթօճի՝ ալքօլամու Մերգիսին կինը՝ Դեղրէր Մերգիտը, Հրէտանցի Խալոյի հարսը՝ Էրուս պաճօն, Լուսարար Էստուրին կինը՝ Վերգօն ու մայրը՝ Փոթորիկ պաճօն եւ վերջապէս՝ Ֆաթմա պիպին: Այս վերջինը Լուսիե պաճօյին մօտիկ ազգականն էր: Առաջին աշխարհամարտի այդ անիծեալ եւ մութ օրերուն, տեղահանութեան ու Մեծ Եղեռնի օրերուն Աննա անունով փոքր աղջիկ՝ ճամբայ ելլելէ յետոյ... Եւ ի՛նչ ճակատագիր. տարիներ վերջ երեսան կ'էլլէ այս անգամ որպէս մօլլալի մը կրօնամուկ քուրդ շէյխի մը կինը եւ անունով՝ Ֆաթմա: Ան սեւ չարշաֆի մը, սեւ լաչակի մը

ետին իր ճերմկած մազերուն եւ ճմրթկած՝ ակօսացած ճակտին, սեւ ճակատագրին մէջ թաղած էր իր մութ անցեալը: Տարին մէկ-երկու անգամ, Զատիկին կամ Գաղանդին կ'այցելէր իր ազգականներուն եւ տան մէջ մեծ խնամքի ու յարգանքի առարկայ կը դառնար» [2, 18-19]:

Որքէ մեկին չմոռանալով իրականացված այս մարդահամարն ասեւ սկզբունքային է հեղինակի՝ Մկրտիչ Մարկոսյանի համար. նրանք մարդիկ են, անհատականություններ, նրանք ժողովուրդ են: Այս սկզբունքը պարտադիր է նաև մյուս գործերում, մասնավորապես «Մեր Անունները» պատմվածքում, որտեղ հիշվում է «մեր այդ կողմերում» երեխաներին անվանակոչելու իրողությունը. «Երբ կարգը կու գար երեխայի անունը ճշդելու, մենք գիտէինք թէ, անիկա եթէ մանչ է, առհասարակ կ'անուանուէր Տիգրան» [1, 123]: Եվ հիշվում են Տիգրանները՝ Խեւ Տիգրէն, Նոնյենց Տիգրէն, Վանէսենց Տիգրէն, Տիգրայենց Տիգրէն..., «Տիգրաններէն վերջ երկրորդ կարգի վրայ Տիրանները կու գային: Թիւմէսենց Տիրէն, Էրկան Տիրէն, Բօթբեր Տիրէն, Յէխէկի Տիրէն, Հէրատո Տիրէն եւ ուրիշներ...» [1, 124], ապա հերթը գալիս է Խաչոսներին՝ Տեմըրճի Խաչօ (հեղինակի մորեղբայրն է), Դոնում զուլխ Խաչօ, Եւմէնճի Խաչօ (կոշկակար Խաչօ), Օսկերիչ Խաչօ, Քոռ եւ Քէչէլ Խաչօ, Խնամի Խաչօ... Չմոռանանք հայոց թաղամասի գլխավոր տատներ-մանկաբարձ Քուրե Մամային՝ «իւր կարմիրի ներկուած երկար մազերուն իւրաքանչիւր թելին չափ հայ մանուկներու ծնունդը իրականացուցած դասակը» [1, 125]:

Ինչպէս այդ կողմերում, այնպէս էլ այս կողմերում ատամնահատիկի արարողությունը համարյա նույնն է, և «կարգը եկած էր շատ աւելի կարեւոր միւս, բուն գործին» [2, 20]: «<...> Մերոքին առջեւը այս անգամ դրին զանազան առարկաներ՝ ինչպէս՝ մատիտ, գիրք, սանտր, հայելի, ոսկի ապարանջան, մանեակ, սղոց, գամ, ծեփիչ, պայտ, մկրատ, ունելի, մախաթ, ասեղ եւ դեռ ուրիշներ» [2, 21]:

Եվ Սերոբս ընտրում է ոսկի ապարանջաններից մեկը: Հյուրերի մեկնելուց հետո Լուսիե պաճոն սպասում է Գառնտի էշի գոռալուն, որովհետև փորձով գիտի, որ նույն պահին իր ամուսին Մշակ Սարգիսն է փողոց հասնելու, իսկ ինքը նրան աչքալուսանք է տալու՝ երբ Սերոբը մեծանա, նրան ոսկերիչի մոտ աշկերտության են տալու: Պատմվածքը վերնագրված է «Օսկերիչ Սերոբը», ասեւ սա արդէն կատարված-ավարտված գործողության արդյունք է: Բայց ինչքա և սեր ու ժպիտ կա, քչով ապրելու համառություն:

Հրանտ Մաթնոսյանն իր մանկության տարիների մասին խոսելիս հաճախ է օգտագործում «ժամանակներն աղբատ էին» կապակցությունը: Մաթնոսյանն ու Մարկոսյանը համարյա տարեկիցներ են, և Արաքսի այս ու այն ափերին նույն աղբատ ժամանակի մէջ ապրած մարդկանց համար կարևոր է դառնում աղքատությունից, դառնությունից, մութից լույս կորզելու կարողությունը:

...Հրետանը հեղինակի նախնիների ծննդավայրն է, հեղինակի սովորած երրորդ բառը «պու»-ջրից և «փեփե»-հացից հետո: Հրետան հատուկ անունը սովորեցրել է հեղինակի Սարգիս հայրը, որովհետև «հայրս՝ Սգեն, մայրս՝ Խնօն, մեծ հայրս՝ Խալօն, մեծ մարիկներս՝ Սենեմն ու Մարօն, էմմէս՝ հօրաքոյրս Միլյէն, տայիս՝ մօրեղբայրս Խաչօն եւ Առաջին Աշխարհամարտի այդ անիծյալ օրերուն՝ Մեծ Եղեռնին կորսուած, միմիայն իրենց անուններով ինձի ծանօթ մեծ հայրս Մկրտիչը, հօրեղբայրներս Աբրահամը, Նշանն ու Խաչատուրը, բռնուն ալ հոն ծնած էին, հոն՝ Հրետանի մէջ, ու յետոյ ցիրուցան եղած... կամ մօրս ապացուածքով պերտան-պերտան եղած էին, այսինքն՝ կտոր-կտոր, հոս ու հոն... Յետոյ այդ կտորներէն միմիայն մէկ մասը ճակատագրական անիմաստ, լեղի եւ դառն խաղերէ, ինչ ինչ ելեւէջներէ յետոյ, այս անգամ ալ կրկին բողոն բողոն զիրար գտած էին տարիներ, տարիներ յետոյ... ու Հրետանը իրենց համար մնացած էր անուն մը որպէս մասունք, որպէս սուրբ...» [2, 27-28]: Հրետանը նաև դարձել է համեմատության կայուն եզր ամեն ինչի համար՝ թգի, թթի... Հրետան պապենի երկիրը դարձել է համբույր, կարոտ, դարձել է խաչքար...

«Իմ անունս...» պատմվածքը ընտանիքի համառման և կայացման պատմություն է:

«Հայրս՝ Սգեն, երբ «Էստծոյ օրէնքն է» կ'ըսէ ու կ'ամուսնանայ մօրս՝ Խնոյի հետ, կը ծնի Մարկոսեան գերդաստանի առաջին կամ ինչպէս մենք կ'ըսենք, Էղջընէկ զաւակը՝ աղջիկ մը» [2, 54]: Փորձառու պատավները շատ շուտ հասկանում են, որ աղջիկը գնացական է, այդ պատճառով էլ «Տէր պապան միւռնով, խաչով եւ Աւետարանով կ'օծէ երախան եւ անունը Էրեքսի՝ Արաքսի կը դնեն:

Եւ փորձառու պատաները մասնագիտութեան... կարգին նոյնպէս իրապէս մասնագէտ բժիշկներու տուած դեղերուն կու գայ կը յաջորդէ մեր Տէր Արսէնի աղօթքը՝ «հոգւոցն հանգուցելոց Քրիստոս Աստուած...» [2, 54-55]:

Հաջորդիվ «կը ծնի մանչ մը», տեղի է ունենում մկրտությունը, և, բնականաբար, անվան ընտրության խնդիր կա:

«Եւ երբ Տէր Արսէն կը հարցնէ.

– Ի՞նչ մըն եղնէ տղուն էնունը...

Կնքահօր ձայնին կու գայ, կը միանայ մեծ մօրս եւ հօրս միաբերան, զի՛լ ուժեղ ձայնը.

– Մկրտի՛չ...» [2, 56]:

Այս երեխան էլ գնացական է: «Առաջին ամառն ալ կ'առնէ կը տանի Մկրտիչը իր մեծ հօրը մօտ... անոր անյայտ գերեզմանին շուքին դրացի...»

Եւ Տէր Արսէն կրկին ձայնին է տուած. «Հոգւոցն...» [2, 56]:

«Իսկ մա՛յրս... Դորէն յոյ է անշուշտ. յուսահատիւ, վիատիվ կ'ըլլայ, կ'եղնէ՞, չէ, չ'ըլլար, չ'եղնի:

Այքերնիդ լոյս, այս անգամ ալ երախան տղայ է: Սա ինքնին արդէն լա՛ւ, շատ լա՛ւ նշան է» [2, 56-57]: Դորից մկրտության և անվան ընտրության խնդիր կա, սակայն «Տէր Արսէն ալ այդ օրերուն կրկին մեկնած է Խարբերոյ, ուրկէ պիտի անցնի ու երթայ մինչեւ Տէրիք՝ հայաշատ գիւղաքաղաք մը Մարտինի մօտ, ու ալ Աստուած գիտէ թէ երբ պիտի վերադառնայ Տիգրանակերտ: <...> Կը վագեն կ'երթան Հայունէ Խորէին: Սա՛՝ քելտանի վարդապետ մըն է <...> ան ալ քրիստոնէայ եկեղեցական մըն է, վերջապէս ան ալ խաչով, մոմով եւ Աւետարանով քանի որ կ'աղօթէ՝ ուրեմն նորէն ալ լաւ է առանց միւռնի թաղելէ» [2, 58]:

Անվան ընտրությունը վաղուց է կատարվել. «<...> մեծ հօրս անունը կրկին կու գայ երախայի մը անունով յարություն կ'առնէ, մեծ մայրս հպարտ է իր ամուսնով, հայրս՝ կրկին իր հօրը յիշատակովը երջանիկ» [2, 59]: (Նմանություն կամ նույնություն տեսնենք այս պատմության և Մ. Գալշոյանի Ջորի Միրոյի, իր Հարություն որդիների միջև):

Ու տեղ է գտնում «հօրը սակարկությունը... Աստուծոյ հետ: <...> Երբ Աստուած հայրիկն ալ մէկ նժարին մէջ կը դնէ վոյտ նորածինը, կամ մեր բարբառով՝ **լոպտորը**, եւ միւս նժարին ալ եօթը հատ ոչխար՝ կը նախընտրէ առնել ոչխարները...» (ՏԱ, 59):

Այս Մկրտիչն արդէն մնացական է:

«Այս Մկրտիչը եօթը ոչխարի փոխարէն ապրեցնելու իրաւունք շահեցաւ իր անբախտ եւ տարաբախտ մեծ հօրը յիշատակը...:

Գիտէ՞ք, այս Մկրտիչը ես եմ:

Մկրտիչէն յետոյ հայրս Սգեն եւ մայրս Խնօս միասնաբար աշխատեցան որպէսզի գրեն հայոց պատմութիւնը... Իրենց զաւակներուն անունովը: Աղջիկներուն տուին մեր թագուհի-ներուն անունները եւ մանչերուն ալ՝ թագաւորներուն:

Մեր եօթներորդ եղբայրն ալ Արտաշէս թագաւորի անունով մկրտելէ յետոյ երբ հասկցան, թէ մեր պատմութեան հազիւ թէ կ'էսը հասած են, եւ մեր Հայոց պատմութեան մնացյալ մասն ալ շա՛տ երկար է, «ալ հերիք է, ալ կը բաւէ» ըսին, իրենց աշխատանքին վերջ տուին...» [2, 60]:

Մեջբերված նախադասություններում և հատվածների մեջ հորդում է երգիծանքը: Մրանց հավելենք մեկ-երկուսը. «Ներս մտանք: Պօզանն ալ ձեռքը զրմպօ <քարյուղի

լապտեր» մը ունէր: Երբ Պօզանի զըմպոյին լոյսը, երբ իմ զըմպօյիս լոյսը եւ Պօզանին ճերմակ վարտիքին լոյսը իրար միացան, կ'ըսես արեւ կը ծագէր...» [1, 137], «Մեստանը երկու հատ պոչ ունէր... Կատունները երկու պոչ կ'ունենան՝ այո՛, մեր Մեստանը ունէր: Հատ մը երկար, դեղին իր սեփական պոչը, հատ մըն ալ գունտի պէս կլոր, սեւ մը: Այդ սեւ պոչը ես էի: Մեստանը ուր որ երթար՝ ես ալ ետեւէն կ'երթայի» [2, 12]:

Վերջաբանի փոխարէն: Մ. Մարկոսյանի պատմվածքներում միշտ ինչ-որ բան ավարտվում է, կամ մարդու (մարդկանց) երկրային կյանքը հասնում է հանգրվանին, սակայն նրանք մշտական ներկայություն են: Եվ ինքն իր ընտանիքն ու կորսված մանկությունն է փնտրում՝ մեկ անգամ ևս հաստատելով, որ սփյուռքահայ գրականությունը նախկին (կարոտի) ու ներկա (նահանջի) կորուստների արտահայտություն է, նաև 1915-ին կանգ առած ժամանակի ու հարափոփոխ տարածք «կեղծ հայրենիք»-սփյուռքի (ձևակերպումը Ն. Մարաֆյանինն է) գրականություն: Մկրտիչ Մարկոսյանի գրականության մեջ նախնիների ծննդավայր Հրետանը փոխվում է Տիգրանակերտի Խանչեբեք (Գյավուր թաղ) թաղամասի, ապա «եկած է Ստամբուլ», ապա հասել է անդենական աշխարհի Պուսի Շիշլի թաղամասի հայկական գերեզմանատուն: Այսօր ինքը ներկաների մեջ չէ. ինքը հավերժական ներկայություն է, Հակոբ Մնձուրուն հաջորդածը և վերջինը: Վերջինը լինելն էլ մեծ պատասխանատվություն է: Այլևս չկան նրա կերպարները ձևավորած մարդիկ. նրանք որպես կերպար ապրում են գրի պայմանականության մեջ, բայց կան այդ մարդկանց հաջորդած սերունդները: Բայց ո՞րն է այս մարդկանց հայ մնալու առեղծվածը: Մի կարգին լեզու չունեն. խոսում են բարբառով, որ կամաց-կամաց ծվատվում է թրքերենի, քրդերենի, զազայերենի ներգործությունից, մի կարգին պատարագ չունեն. եկեղեցին հանդիպավայր է, ինչ-որ խորհրդավորի հետ հաղորդակցվելու ասպարեզ. մեր օրերում «<...> եկեղեցական արարողություններ ալ տեղի կ'ունենան տաղաւար տօներուն եւ բացառիկ ալ առիթներով» [2, 189]: Եկեղեցում գլխավոր գործող անձը «Հէյր Էբրեհէմ» է, որն էլ կերպափոխվում է այլուր Աստծո՝ հացի, կամ էլ վերափոխվում է անձրին: Այս մարդիկ լուսի պաշտամունք ունեն, մի կարգին կենցաղավարություն չունեն. աղքատ ժամանակը դրա հնարավորությունը չի տալիս, բայց ունեն ապրելու համառություն և վերարտադրվելու բնագոյ, ունեն ծննդավայրի և արմատների հիշողություն, ունեն ոգի, այնինչ «Այստեղ գիրքը փակւած է վաղուց: Երեսի վրայ թողած: Դարձրած: Ալիքը խուժել է քարերի տակ: Ոչինչ չի ծփում: Ոչ ոք չի կանչում» [5, 249]: Այդ թաքնված, ներս գցած ոգին արթնացնելու պահանջը կա, այդ ոգին արթնանալու ցանկություն ունի, այլապես քնով կանցնի ու կմարի, այդ ոգին արթուն պահելու համար կանչող Ձեռով Հովան է պետք:

...Սոցցանցերն ակնարկում են, թե այսօր Դիարբեքիրում ապրում են սոսկ 10 հայ ընտանիքներ: Նախ կասկածելի է թիվը, ապա գավառաբնակներից շատերը մեկնել են Պուլիս՝ «հէյրէն տըրվերու» և հայերեն ապրելու, մի մասն ապրում է մեկուսացած՝ հայերից, և՛ այլազգիներից (նկատի ունենք իսլամացած հայերին և հավատքի խնդիրը չկարևորողներին), մի մասն աստիճանաբար ձուլվում է քրդա-, թրքա-, զազայական միջավայրին, և հարց է ծնվում՝ ո՞ր գէնը, ոգին կամ լեզուն է հաղթելու գլոբալացման վաղվա օրով: Եվ էլի հարց է ծնվում՝ «կ'անգիտանա՞նք» նրանց՝ Արաքսի այն ու այս ափերին անտեր մնացածներին՝ տիգրանակերտցիներին, մալաթիացիներին, ակնեցիներին, արցախցիներին, թե՛ միայն հավատավոր խենթեր են գգալու տեր լինելու պատասխանատվությունը: Իսկ այս պահին նրանք աստ ու անդ, նաև ներկայիս Թուրքիայի ամենատարբեր բնակավայրերում ապրում են սպասումով, որ իրենց կհիշեն:

Գրականություն

1. Մկրտիչ Մարկոսյան, Մեր այդ կողմերը, «Արաս» հրատարակչություն, Է տպագրություն, Ստանպոլ, 2023:
2. Մկրտիչ Մարկոսյան, Տիգրիսի ափերեն, «Արաս» հրատարակչություն, Գ տպագրություն, Ստանպոլ, 2023:
3. «Հառաջ»-միտք և արուեստ, Փարիզ, 1988, 63-րդ տարի, 5 յունիս, կիրակի, թիւ 128 (16765):
4. Մնձուրի Հ., Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986:
5. Զարեան Կ., Անցորդը եւ իր ճամբան, Երևան, «Սարգիս Խաչէնց. Փրիթինֆո», 2010:

Непоколебимость стремления оставаться армянами в тех наших краях (сборники Мкртича Маркосяна «Эти наши края» и «На берегах Тигра»)

Пилоян Валерий

Резюме

Ключевые слова: *выжившие после геноцида, вера, обычаи, бурление памяти и любви, наследование, финал, семейная версия армянской истории, сатира*

Даже спустя более ста лет после геноцида мы должны признать, что в Западной Армении продолжают жить армяне, и только лишь верующие безумцы ощущают ответственность быть там хозяевами. Книжки Мкртича Маркосяна «Эти наши края» и «На берегах Тигра» подтверждают существование этих людей и сохраняют о них память – это и есть народ. Этот принцип обязателен во всех делах. Сегодня Мкртич Маркосян – последний представитель «литературы тоски» – жанра, обремененного особой ответственностью. Прототипов его героев, живших в реальности и переосмысленных в художественном пространстве, больше не существует, но на смену им пришли новые поколения. В чем загадка того, что они продолжают оставаться армянами? Чтобы этого не случилось, нужен новый Ован-Горлан. Без него многие будут жить изолированно как от армян, так и от неармян (речь идет об исламизированных армянах и тех, кому безразличен вопрос веры), некоторые ассимилируются, и здесь возникает вопрос: какой ген, какой дух, какой язык победит в эпоху глобализации? Здесь возникает и другой вопрос: должны ли мы пренебрегать теми, кто чувствует себя покинутым по обе стороны Аракса: жителей Тигранакерта, Малатии, Акны, Арцаха? Или ответственность ощутят лишь верующие безумцы, вновь возомнившие себя единственными хозяевами? А сейчас они живут в ожидании того, что о них вспомнят.

The Persistence of Keeping the Armenian Identity in Our Regions (Mkrtich Markosyan's Collections "Our Regions" and "From the Banks of the Tigris")

Piloyan Valeri

Summary

Key words: *survivors of the genocide, faith, customs, the fermentation of memory and love, inheritance, ending, family version of Armenian history, satire*

Even after the genocide that took place a hundred or more years ago, we must acknowledge that Armenians still live in Western Armenia, and only the religious fanatics felt the responsibility of being the owner. Mkrtich Markosyan's books "Our Regions" and "From the Banks of the Tigris" confirm their existence and remember them: they are a people. This principle is essential in all his works. Today, M. Markosyan is the last representative of the "literature of longing," a genre burdened with a special responsibility. His characters' prototypes, who live as characters in the conventions of writing, no longer exist but generations of those people that followed are still here. What is the mystery of these people remaining Armenian? To keep that spirit alive, a calling voice like that of Hovan's is needed; otherwise, some of them live isolated from both Armenians and foreigners (referring to Islamized Armenians and those who disregard faith), some assimilate, and the question arises: which gene, spirit, or language will prevail in the face of globalization tomorrow? And another question emerges: should we ignore them – those abandoned on both banks of the Arax, the people of Tigranakert, Malatya, Akni, Artsakh – or will only the religious fanatics feel the responsibility of belonging? At this moment, they live in the hope that they will be remembered.

Ներկայացվել է 15. 05. 2025 թ.

Գրախոսվել է 30. 05. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 26. 11. 2025 թ.